ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

13 Նոյեմբերի 2017 թվականի N 138-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 42-րդ և 44-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ ԲՓ 86 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» պետական փորձաքննական եզրակացությունը, «ԳԵՈՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության 2017 թվականի օգոստոսի 11-ի թիվ 08-01 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԳԵՈՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ընկերություն)՝ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու 2012 թվականի օգոստոսի 30-ի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/098 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 2 տարով, սահմանելով մինչև 2019 թվականի օգոստոսի երեսունմեկը. սույնը հանդիսանում է երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետի 2-րդ երկարաձգումը,

2) տրամադրված տարածքի մակերեսը նվազեցնել 948 հա-ով, սահմանելով 882 հա, հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4428335 Y=8542942; 2.X=4428403 Y=8543022; 3.X=4429122 Y=8544200; 4.X=4428733 Y=8545479; 5.X=4428352 Y=8545842; 6.X=4427368 Y=8546924; 7.X=4427039 Y=8548628; 8.X=4425511 Y=8549336; 9.X=4425086 Y=8548921; 10.X=4425085 Y=8548844; 11.X=4425749 Y=8548183; 12.X=4425749 Y=8546051; 13.X=4426647 Y=8546052; 14.X=4427957 Y=8544198; 15.X=4427646 Y=8543716 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):

2. կատարել փոփոխություն Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման թիվ Պ-098 պայմանագրում:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքում փոփոխություն կատարելու պետական տուրքը,

2) հրավիրել ընկերությանը՝ 10-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու,

3) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխված տարբերակը,

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

5) սահմանված կարգով իրականացնել գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ